

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«----» ----- 2025թ.

N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

**ԽՈՐԵՆ ՊԱԼՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն հայ հոգևոր երգիչ, մանկավարժ, շարականագետ, ծիսագետ, բանասեր Խորեն Պալյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Եգ. Կողբացու փողոցի հ.42/3 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԽՈՐԵՆ ՊԱԼՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Խորեն Պալյանը ծնվել է 1929թ., Լիբանանում:

1946 թվականին հայրենադարձել է: Ավարտել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանը: 1955 թվականի դեկտեմբերին Մայր տաճարում ձեռնադրվել է սարկավագ և 1961 թվականին Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի ձեռամբ ձեռնադրվել է կուսակրոն քահանա: 1962 թվականին Օշականում պաշտպանել է վարդապետական ավարտաճառ և ստացել վարդապետական չորս աստիճաններ: Սուրբ Էջմիածնում զբաղեցրել է պատասխանատու պաշտոններ:

1965 թվականին թողել է հոգևոր ասպարեզը և ամուսնացել հոգևոր երգերի կատարող Լուսինե Զաքարյանի հետ:

1965-1968 թվականներին սովորել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում, եղել է հայոց լեզվի պատմության ամբիոնի դասախոս, դասավանդել լեզվի պատմություն և գրաբար, 1995-2005 թվականներին՝ աստվածաբանության ֆակուլտետում՝ ծիսագիտություն, վարքաբանություն: 15 տարի ղեկավարել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի «Հայ տոհմիկ» երգչախումբը, որը բազմաթիվ ելույթներով հանդես է եկել Հայաստանի տարբեր շրջաններում և Արցախում:

1978-2004 թվականներին դասավանդել է Սուրբ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում, ապա Սևանի Վազգենյան դպրանոցում՝ ժամակարգություն, տեսական շարականագիտություն և հայ հոգևոր երաժշտություն առարկաները: Հիշյալ ծառայությունները բարձր գնահատելով՝ Վեհափառ Հայրապետ Ս.Տ. Գարեգին Բ կաթողիկոսը Խորեն Պալյանին շնորհել է «Սուրբ Ներսես Շնորհալի» շքանշանը:

Մանկավարժական և հասարակական գործունեությանը զուգահեռ հեղինակել է երաժշտագիտական, բանասիրական, եկեղեցագիտական բազմաթիվ հոդվածներ: Ունի նաև բազմաթիվ հոդվածներ Հայկական սովետական հանրագիտարանում, Մանկական Քրիստոնեական Հանրագիտարանի համահեղինակներից է: Տարբեր տարիներին վարել է նաև «Զրույցներ գրաբարի մասին», «Խորհուրդ խորին» և այլ հեռուստատեսային հաղորդաշարեր: 1996-2005 թվականներին վարել է «Արևազալ» երաժշտական-հոգևոր ամենշաբաթյա հաղորդաշարը:

1993 թվականից ընդգրկվել է «Գանձասար» աստվածաբանական կենտրոնի շարականագիտության բաժնի խմբագրական կազմի մեջ՝ մասնակցելով հրատարակչական աշխատանքներին:

Խորեն Պալյանը համահեղինակ է «Դասական գրաբարի հատընտիր» գրքի: 2005 թվականին լույս է տեսել հեղինակային «Ժամակարգություն Հայաստանեայց Եկեղեցույ» ուսումնական ձեռնարկը: 1989 թվականից ամենամյա համերգ-դասախոսություններով, համերգներով հանդես է եկել Լոս-Անջելեսում, Հելսինկիում:

Խորեն Պայանը վերջին տարիներին նաև ակտիվ հասարակական գործունեություն է ծավալել, անդամ էր «Հայ մտավորականների ֆորում» կազմակերպության ավագանու:

Պայանի աճյունն ամփոփված է էջմիածին քաղաքի Սուրբ Գայանե եկեղեցու բակի գերեզմանատանը:

Խորեն Պայանը մահացել է 2007 թվականին, Երևանում:

Խորեն Պայանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Եզ. Կողբացու փողոցի հ.42/3 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացվել է Լուսինե Զաքարյանի տուն-թանգարանի հիմնադիր Ռաֆֆի Պայանի և տնօրեն Սուսաննա Դավթյանի կողմից: Հուշատախտակի տեղադրման ֆինանսական ծախսերը կատարվելու է Լուսինե Զաքարյանի տուն-թանգարանի հիմնադիր Ռաֆֆի Պայանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ